ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 9, 1957 Общественные науки

Է. Կարապետյան

ՏԱՆՈՒ ԾԱՌԱՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Միջնադարյան հուշարձանների առանձին տվյալների և հիմնականում անցյալ դարի երկրորդ կեսին վերաբերող ազգագրական նյութերի քննությունը թույլ է տալիս ենթադրելու, որ իր զարգացման ընթացքում հայկական ընտանեկան համայնքի կազմը կրել է արմատական փոփոխություններ։

Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է վաղագույն ժամանակներից ընդհուպ մինչև անցյալ դարի վերջերը ընտանիքի կազմի մեջ մտնող տնային աշխատողի հասարակական դրության պատմական զարգացման հարցը։

Ինչպես հավաստում են ազգագրական նյութերը, անցյալ դարի երկրորդ կեսին Հայաստանում գոյություն է ունեցել, այսպես կոչված, նոքարների ինստիտուտը։ «Նոքար» բարբառային բառը պարսկական ծագում ունի և նշանակում է ծառա։ Հայերենում «նոքար»-ի հոմանիշներն են «մշակ» բառը և որոշ բարբառներում տարածված «հոտաղ», ինչպես և արաբական ծագում ունեցող «ազապ»՝ չամուսնացած տղա կամ աղջիկ բառերը։

Ինչպես ցույց է տալիս Ս. Երեմյանը «ծառա» և «մշակ» տերմինները հին Հայաստանում նշանակել են ստրուկ, ընդ որում «մշակ» կոչվել է մասնատիրական տնտեսություններում աշխատող ստրուկը[1]։

Տարբեր ծագում ունենալով, հետագայում մշակ, ծառա, նոքար, ազապ և հոտաղ տերմինները ստացել են տնային վարձու աշխատողի իմաստ, իսկ վերջինս (հոտաղ կամ հոդաղ) գործ է ածվել նաև ընտանիքի անդամ հովվի և երիտասարդ աշխատողի նշանակություններով[2]։

Առանձին դեպքերում տանտերը թույլ էր տալիս նորարին ամուսնանալ իր աղջկա հետ։ Մարտունու շրջանի Ղարանլուղ գյուղում նման ամուսնությունների մասին խոսում են որպես միանգամայն սովորական երևույթի։ Այսպես, այդ գյուղում մի տանտեր, որին դուր է գալիս իր հոտաղի ազնիվ վարքը և աշխատասիրությունը, առաջարկում է նրան ամուսնանալ իր միակ դստեր հետ, նորապսակներին տալով մի քանի ոչխար, մի հորթ, անկողին և տնային կահկարասի։ Նախկին նորարը առանձին տնտեսություն է կազմում և ժամանակի ընթացքում դառնում է միջակ տնտեսատեր[3]։

Հետաքրքրական են Սալմաստի Աղրակ գյուղից Ղարանլուղ գաղթած Մոսենի և իր նորարի միջև ստեղծված փոխհարաբերությունները։ Մոսենը՝ տանտերը ունեցել է յոթ դուստր և մի մանկահասակ որդի։ Ղազարը նրա տանը 14 տարի մշակություն է անում։ Վեց աղջիկներին ամուսնացնելուց հետո, Մոսենը Ղազարին առաջարկում է ամուսնանալ իր անդրանիկ դստեր հետ, պայմանով, որ նա դառնա տնփեսա, իր մահից հետո ժառանգի ընտանիքի գլխավորությունը, պարտավորություն ստանձնելով մեծացնել իր մանկահասակ որդուն։ Ղազարը

---

[1] „Вестник древней истории", 1950, № 6, էջ 23։
[2] Ստ. Մալխասյան, Հայերեն բացատրական բառարան, հատ. 3, էջ 12։
[3] Նյութը հաղորդել են ղարանլուղցիներ Հաչատուր Ալեքսանյանը և Գևորգ Գոդոսյանը։

ամուսնանում է տանտիրոջ դստեր հետ, նրա մահից հետո իսկապես դառնում ընտանիքի գլխավորն ու ժամանակի ընթացքում մեծացնում և ամուսնացնում տանտիրոջ որդուն։ Ընտանիքը բազմանում է, բաժանվում է երկու դուստր ընտանիքի, ընդ որում նրանցից մեկը կալվում են Ղազարի, իսկ մյուսը՝ հանգուցյալ տանտիրոջ որդու՝ Մնացի որդիները իրենց ուղիղ վերընթաց սերունդներով։ Ընտանիքի ունեցվածքը հավասարապես բաժանվում է երկու ընտանիքի միջև։

Եթե նոքարը, երկար տարիներ ապրելով տիրոջ տանը, ցանկանում էր ամուսնանալ, հարսնացուի ընտրությունը կատարվում էր նույն կարգով, ինչ տվյալ գերդաստանի անդամինը։ Այսպես, Ղարանլուղ գյուղում տանտերը իր գերդաստանում տաս տարի ծառայած հոտաղին ամուսնացրել է համագյուղացի աղջկա հետ, նրանց տալով մի կով, անկողին և այլ կահկարասի։ Դեպքեր են եղել, երբ ամուսնանալուց հետո նոքարին տրվել է որոշ հողամաս գերդաստանի ծխատիրությունից։ Գ. Հալաջյանի հաղորդմամբ, Դերսիմի լեռնային հնձորեկ գյուղում նույն գերդաստանում մի քանի տարի աշխատած նոքարի հարսանեկան ծախքերը հոգալը և ժամանակավոր օգտագործման համար նրան հողամաս տալը եղել է ընդունված սովորույթ։ Այդ սովորույթը խախտողը դատապարտվում էր գյուղական համայնքի կողմից։ Նույն սովորույթը եղել է նաև Բերդակ (Վանի վիլայեթ)[1] և Հավատորիկ (Սասուն)[2] գյուղերում։

Ամուսնանալուց հետո նոքարը հաճախ բնակվում էր տանտիրոջ տան մոտ և իր կնոջ ու երեխաների հետ միասին շարունակում էր աշխատել տվյալ գերդաստանի համար։

Եթե մինչև ամուսնանալը նոքարը կատարում էր երկրագործական աշխատանքներ, ապա գերդաստանի մյուս անդամների հետ միասին քնում էր տանտնում, իսկ եթե հովիվ էր՝ ախոռում։ Նա ուտում էր գերդաստանի տղամարդկանց հետ, և երիտասարդ հարսները նրան ծառայում էին գերդաստանի տղամարդ անդամներին հավասար։ Ղարանլուղ գյուղի բնակիչները, որպես ամոթալի երևույթ, մինչև օրս էլ նախատինքով են հիշում, որ Բզնունիների տանը տանտերը աշխատողին առանձին է կերակրել և նույնիսկ նրա համար ցածրորակ հաց է թխել տվել։ Հետաքրքրական է, որ հաղորդող Գ. Պողոսյանը հրաժարվեց հաստատել այս փաստը, ասելով, որ դա անցած բան է և չարժե հանգուցյալի մասին վատ հիշել։

Նոքարը մասնակցում էր գերդաստանի տղամարդկանց զրույցներին, նրանց հետ էր անցկացնում իր ազատ ժամանակը։

Հայկական գերդաստանում նոքարի հատուկ գրության վրա ուշադրություն են դարձրել մի շարք հայ ազգագրագետներ։

«Ծառան,— գրում է Ե. Լալայանը,— որ միայն հարուստ տներումն է լինում և առավելապես վարձվում է անասունները հոգալու և դաշտում աշխատելու նպատակով՝ տան անդամ է համարվում։ Նա տղամարդկանց հետ է հաց ուտում, նրանց խոսակցություններին առանց քաշվելու մասնակցում։ Սա ևս աներկյուղ հրամայում է փոքր հարսին. այսպես, օրինակ, եթե կամենա ջուր խմել, նույնիսկ այն միջոցին, երբ բոլոր տղամարդկանց հետ հացի է նստած,

[1] Ըստ Խաչատուր Մելիքյանի հաղորդման։
[2] Ըստ Եղիազար Կարապետյանի հաղորդման։

հրամայում է փոքր հարսին, որ ջուր տա, և սա առանց տրտնջալու կատարում է հրամանը»[1]։

Նոքարի իրավունքների մասին ավելի լրիվ պատկերացում է տալիս Ստ. Լիսիցյանը. «Ճաշի ժամանակ մի տեսակ հավասարություն էր հաստատվում տղամարդկանց միջև (բացառությամբ տղամարդկանց դասավորումը ըստ ավագության)։ Եթե տանը կար տնային աշխատող կամ հովիվ, ընդհանուր առմամբ բոլոր նոքարները նստում էին սեղանի շուրջը՝ տանտիրոջ ընտանիքի հետ միասին։ Աշխատողը օգտվում էր ընտանիքի տղամարդ անդամների բոլոր արտոնություններից։ Նա արական սեռի մյուս անդամներին համահավասար, կարող էր հրամայել կրտսեր հարսին կամ աղջկան՝ իր համար ջուր, թարմ հաց, գդալ, լրացուցիչ կերակուր բերելու»[2]։

Նկարագրելով Վանի նահանգի գյուղերից մեկի գերդաստանը, հայտնի բանահավաք Մ. Միրախորյանը գրում է, որ առանց բացառության բոլորը՝ ծերերը և երեխաները, պատանիներն ու աղջիկները, հովիվը և ծառան, միատեսակ էին ընդունում և հյուրասիրում հյուրին»[3]։

Այս խիստ յուրատեսակ ինստիտուտը, սակայն, երբեք հատուկ ուսումնասիրության առարկա չի հանդիսացել։ Միայն Ստ. Լիսիցյանն է տվել դրա ընդհանուր բնորոշումը, ըստ որի դա 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ գյուղացիական միջավայրում պահպանված հայրիշխանության ժամանակի փոխհարաբերությունների սովորութական հետաքրքիր մնացուկն է[4]։

Վերոհիշյալ փաստերի հիման վրա կարելի է եզրակացնել, որ նոքարի դրությունը բավականին հակասական է եղել. մի կողմից նա իր աշխատանքը վաճառել է տվյալ գերդաստանին, մյուս կողմից, սովորութական իրավունքով, նա համարվել է գերդաստանի անդամ։

Հարուստ ընտանիքների կողմից սակավահող և հողազուրկ գյուղացիներին շահագործելը հասարակական հարաբերությունների տվյալ աստիճանում օրինաչափ երևույթ էր։ Նոքարի՝ որպես գերդաստանի հավասար անդամի, դրության հակասականության բացատրությունը, ըստ երևույթին, հարկավոր է փնտրել մեծ ընտանիքի զարգացման ավելի վաղ աստիճանում։

Միանգամայն ակներև է, որ գերդաստանում վարձու աշխատողի նկատմամբ ցուցաբերվող նման վերաբերմունքը վարվեցողության երբեմնի չափանիշների մնացուկ է։ Պատահական չէ, որ քաղաքներում և առանձին առաջավոր գյուղերում նոքարի և գերդաստանի անդամների փոխհարաբերությունները կրում էին բոլորովին այլ բնույթ։ Դա շահագործողի և շահագործվողի չքողարկված փոխհարաբերությունն էր։

Հայ մեծ ընտանիքում տան աշխատողի դրության լուսաբանման տեսակետից զգալի հետաքրքրություն է ներկայացնում Պերճ Պռոշյանի «Բղդե» վեպը։

Աշտարակցիների կենցաղի հմուտ գիտակի գեղարվեստական ստեղծագործությունները ողողված են արժեքավոր ազգագրական նյութերով։ «Բղդե» վեպում տրված տան աշխատողի (որը հին Բայազետի գաղթականների բարբա-

---

[1] «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1898, Գ. գիրք, էջ 236 – 237։

[2] Кавказский этнографический сборник, т. 26, Москва, 1956, стр. 221.

[3] Մ. Միրախորյան, Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Հայաստանի, Գ. Պոլիս, 1884, 2-րդ մաս, էջ 28։

[4] Кавказский этнографический сборник, т. 26, стр. 221.

ռում անվանվել է թուրքերեն «ամալա», այսինքն՝ «աշխատող» բառով) դրության նկարագրությունը կարող է օգտագործվել որպես լիովին հավաստի նյութ։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում տան աշխատողի և տանտիրոջ փոխհարաբերությունների բնութագրությունը, որոնք հեղինակի հավաստումով, «այսմանավորված էին ոչ թե գոյություն ունեցող պարտադիր չափանիշներով, այլ ավանդապահությամբ։ «Քանի որովհետև ամալան մի տեսակ սեփականության պես բան է յուր տիրոջ համար, թեև ոչինչ քաղաքական կամ մասնավոր պայմաններով կապված չէ, այլ նահապետական ավանդականության վերա է միայն հիմնված, այդ պատճառով աղայի պարտականությունն է յուր ստորին անդամի, յուր հացափոր ծառայի՝ յուր ամալայի ամեն տեսակ հոգսերը քաշելու»։

Նույն վեպում տանտերը տան աշխատողի մասին խոսում է որպես իր ընտանիքի անդամի։ Դա տանտիրոջը պարտավորեցնում է հոգալ նրա ապագայի և նույնիսկ կնոջ ու երեխաների մասին։ Ամուսնացնելով աշխատողին, տանտերը նրան տալիս է բնակարան և դույք։ Կազմելով իր առանձին տնտեսությունը, «ամալան» շարունակում է աշխատել աղայի տանը[4]։

Դեռևս անցյալ դարում պահպանվող ժողովրդական սովորութական իրավունքի չափանիշները, ըստ որի տան աշխատողը ընտանեկան կյանքի առանձին բնագավառներում ընկալվում է որպես գերդաստանի անդամ,— ենթադրել են տալիս, որ, հավանաբար, նոքարության ինստիտուտը հեռավոր առնչություն ունի տնային ստրկության հետ և հանդիսանում է տնային ստրկության վերափոխված ձևը։

Մեր ենթադրության ճշմարտացիությունը հիմնավորելու համար դիմենք պատմական փաստաթղթերին։ Որոնց կազմում տնային ստրուկներ ունեցող ընտանիքների մասին առաջին դրավոր տեղեկությունները պահպանվել են ասորա-բաբելական աղբյուրներում։

Այդ տվյալները վերաբերում են Հին Հայաստանի տերիտորիայում ուրարտական ստրկատիրական պետության գոյության շրջանին։

Ինչպես հայտնի է, ուրարտական պետության կազմի մեջ մտած առանձին ցեղեր հանդիսացել են հետագայում կազմավորված հայ ժողովրդի հիմնական բաղադրիչներից մեկը։ Այդ տեսակետից էլ ուրարտացիների ընտանիքի մասին առանձին տվյալներ պարունակող ասորա-բաբելական արձանագրությունները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում և նպաստում են պարզելու ուրարտացիներից հայ ժողովրդին փոխանցված հասարակական կառուցվածքի հարցը։

Սարգոն Բ-ի դեպի Ուրարտու կատարած արշավանքներին (714 մ. թ. ա.) նվիրված «Հանդիսավոր արձանագրության» մեջ կան հետևյալ տողերը. «Նրա բաղաքի դռների դեմ ես իշա հաղթականորեն և գերեցի նրա կնոջը, նրա որդիներին, նրա դուստրերին, նրա մարդկանց, նրա տոհմի սերունդը»[2]։

Նույն արձանագրության մի այլ տեղում ասվում է.

«...Ամբիսին իր ընտանիքով և ծառաներով, իր տոհմի անդամներով (Նրա հոր տան սերունդով), իր երկրի իշխանավորներով, 100 ռազմակառքով ես տարա Ասորեստան»[3]։

---

[1] Գ. Պասչյան, Երկրի ժողովածու, Երևան, 1933, հատ. 2, էջ 227։
[2] Նույն տեղում, էջ 230։
[3] Вестник древней истории, 1951, № 3, стр. 33.
[4] Նույն տեղում, էջ 28, 54։

Բերված երկու հատվածներում ընտանիք կազմող ազգակիցների հետ միասին, ինչպես տեսնում ենք, հիշատակվում է նաև մարդկանց մի կարգ մարդիկ, «ծառաներ»։ Պետք է ենթադրել, որ «մարդիկ» կամ «ծառաներ» տերմինները վերաբերել են տնային ստրուկներին։ Այդ է ցույց տալիս թվարկման կարգը արձանագրություններում. մարդիկ և ծառաներ բառերը հիշատակվում են ընտանիք կազմող արյունակից ազգականներից հետո և «նրա տոհմի» անդամներից առաջ։

Ուրարտական հասարակական հարաբերությունների զարգացման այդ աստիճանում ընտանիքը որպես այդպիսին անջատված էր տոհմից, թեև տոհմային հարաբերությունները շարունակում էին զգալի դեր խաղալ։

Բնագրից միանգամայն ակներև է, որ «մարդիկ» և «ծառաները» ընտանիքին ավելի մոտ խումբ էին, քան տոհմային ազգակիցները։

Ընտանիքի զարգացման որոշ աստիճանում տնային ստրուկների գոյության մասին ուղղակի ցուցումներ է պարունակում Մովսես Խորենացու նկարագրած Հայկի գաղթի հատվածը։ Բերենք այդ տողերը. «Որում ոչ կամեցեալ հնազանդ լինել Հայկայ, յետ ծնանելոյ զորդի իւր զԱրամանեակ ի Բաբելոնի՝ չու արարեալ զնայ յերկիրն Արսրագայ, որ է ի կողմանս հիւսիսոյ, հանդերձ որդւովք իւրովք և դստերօք և որդւոց որդւովք, արամբք զօրաւորօք թուով իբրև երեք հարիւր, և այլովք ընդոծնօք և եկօք յարեցելովք ի նա և բոլոր ազխիւ»[1]։

Այս հատվածից երևում է, որ Հայկի ընտանիքի կազմում, բացի արյունակից ազգականներից, մտել է «ընդոծինք» անվանվող մարդկանց խումբը. Խորենացին Հայկի ազգակիցների խումբը հստակորեն սահմանազատում է ընդոծինների խմբից։

Այս հանգամանքի վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել Խ. Սամ. վելյանը «Հին հայ իրավունքի պատմությունը» աշխատության մեջ, նշելով, որ «ընդոծինների» տակ պետք է հասկանալ տոհմին, ընտանիքին պատկանող ոչ-ազգակից տարրերը։

Իսկ ո՞վքեր են այդ խորթ տարրերը։

Ընդոծին տերմինը արդի հայ պատմագրության մեջ մեկնաբանվում է որպես տնային ստրուկ։ Ենթադրություն կա, որ «ազխ» տերմինը նշանակում է ընտանիքին պատկանող ամբողջ ինչքը, այդ թվում նաև տնային ստրուկները։

Ս. Երեմյանը «Ստրկատիրությունը Հին Հայաստանում» աշխատության մեջ գրում է. «Ստրուկները իրենց ծագմամբ բաժանվել են երկու կարգի՝ «ընդոծին» (տառացիորեն՝ տնաբույս) և «աւտարածին»։ Ընդոծինների կարգին է պատկանել նաև «ազախինը», որը հետագա աստիճանում նշանակել է ընդհանուր առմամբ ստրկուհի։ Այսպիսով,— եզրակացնում է հեղինակը,— գոյություն է ունեցել տիրոջ ընտանիքում, կամ տոհմում ծնված ստրուկների մի կարգ. դրանք ժառանգական ստրուկներ են, հաճախ ծագած ստրուկի հետ հասարակության ազատ անդամի կենակցություններից»[2]։

Շատ հավանական է, որ Խորենացին նախարարական Հայաստանում հանդիպել է ստրկատիրական ժամանակաշրջանում գոյություն ունեցած մեծ ընտանիքների շառավիղների, որոնց կազմի մեջ արյունակից-ազգակիցների հետ միասին մտել են նաև ընդոծին կոչվող տնային ստրուկներ։

---

[1] Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913, էջ 33։
[2] ВДИ, 1950, № 1, стр. 21.

Հայաստանում ֆեոդալական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց մեռնում են ստրկատիրական հասարակության ինստիտուտները։ Որպես ստրկության ձևերից մեկը, հետզհետե անհետանում է նաև տնային ստրկության ինստիտուտը, որի մնացուկները շարունակվում են պահպանվել Խորենացու ժամանակ։

Ի լրումն նախարարական Հայաստանում տնային ստրկության վերապրուկները հավաստող Խորենացու տվյալների, բերենք երկու այլ վկայություն ևս։

Շահապիվանի ժողովի սրենքների հոդվածներից մեկն ասում է. «Եթե կին ոք արար և ամուլ պատահեաց, և այրն հանցէ, զնա վասն ամլութեան, որ ինչ կնոջն կարասի բերեալ է ի տուն, թէ աղախին, թէ անասուն, թէ հանդերձ, թէ արծաթ, առնուլ իշխան է և գնալ»[1]։ Այստեղ խոսքը միանգամայն որոշակիորեն տնային ստրկուհու մասին է, ընդ որում «աղախին» տերմինը գործածված է իր սկզբնական նշանակությամբ։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ղազար Փարպեցու վկայությունը, որից իմանում ենք, որ տնային ստրուկներն արդեն անվանվում են ոչ թե «ընդոծին», այլ «ծառա»։

«Իսկ զայրն Մամիկոնեան զվարդ ոչ միայն լոկ անձամբ, այլ և ծառայիւն, դրամ և կազմով, յամուր տեղեաց շահաստանին, ի բարձրաբերձ պարսպայն և յասպարափակ բազմութենէ պահպանացն, ընկալեալ իբրև զարծուի ի թևս իւր և ընդ բաղում անցուցեալ օթևանս՝ ածեալ հասուցանէր խաղաղութեամբ ի յերկիրս Հայոց»[2]։

«Ծառա» տերմինի օգտագործումը տնային ծառայողի նշանակությամբ՝ տվյալ բնագավառում կաստածի տեղիք չի տալիս։ «Ընդոծին» տերմինը տնային ստրկության հետ միասին անհետանում է, բայց պահպանվում են այդ ինստիտուտի վերափոխված մնացուկները, որոնք արտահայտելու համար այդ տերմինների հետ միասին գործածվում է երրեմնի առավել որոշակի նշանակություն ունեցող «ծառան»։ Ժամանակի ընթացքում «ծառան», ինչպես ասացինք, տնային աշխատողի նշանակություն է ստանում։

Հայ ընտանիքի բնույթը անցյալում լուսաբանելու տեսակետից որոշ օգնություն կարող է ցույց տալ «գերդաստան» տերմինի քննությունը։

«Գերդաստան» բառը մեծ ընտանիքի իմաստով գրական շրջանառության մեջ է մտցվել աղգագրագետների՝ մասնավորապես Ս. Լալայանի կողմից, անցյալ գարի երկրորդ կեսին և ստացել է բավական լայն տարածում։ «Գերդաստան» տերմինը ընտանիքի նշանակությամբ ուշ շրջանում գործածվելը նշում է նաև Հրաչյա Աճառյանը[3]։

Ժողովրդական լեզվում ընտանիքի նշանակությամբ տարածված են հղել տուն և օջախ տերմինները։ Սվաղ գործածական է գերդաստան տերմինը, որը ստուգաբանված չէ և ժողովրդական ստուգաբանությամբ սխալ կերպով կապվում է «տուն» բառի հետ («գերդաստան»)։

Հայ միջնադարյան գրականության մեջ մեծ թե փոքր ընտանիքի նշանակությամբ հանդիպում ենք «տուն», «ընտանիք» տերմիններին։ «Գերդաստան» տերմինը գործածված է միայն Հովհան Ոսկեբերանի «Մեկնութիւն յաւետարա-

[1] Կանոնագիրք Հայոց, հրատ. Ա. Ղլտճյանի, Թիֆլիս, 1913, էջ 64։

[2] Ղազարայ Փարպեցւոյ, Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904, էջ 131։

[3] Հ. Աճառյան, Արմատական բառարան, հատ. 2, էջ 12։

նադիրն Մատթէոս» — աշխատության մեջ և 10-րդ դարի պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու գրքում։

Աստվածաշնչում հունարեն θεραπεία բառը թարգմանված է «գերդաստան» բառով՝ ծառայի նշանակությամբ։ «Եւ ասէ Տէր. ո՞վ իցէ հաւատարիմ անտես և իմաստուն, զոր կացոյց տէր իւր ի վերայ գերդաստանի (ընդգծումը մերն է — Է. Կ.) իրոյ տալ ի ժամու զկերակուրս» (Ղուկաս, ԺԲ, 42)։

Հ. Ոսկեբերանի նշված գործում «գերդաստանը» գործ է ածվում ծառայի, աղախնի ինչպես և ամեն տեսակ զույքի («ինչք», «ունեցած-չունեցած») նշանակությամբ։

Հովհաննես Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» գրքում «գերդաստան» տերմինն ունի կալվածքի, հողի նշանակություն։

«Գերդաստան» տերմինի տարբեր իմաստների (ծառա, ինչք, կալվածք) միջև նկատվում է ներքին որոշ կապ, որը հիմք է տալիս ենթադրելու, թե «գերդաստան» տերմինը նախապես ունեցել է առհասարակ անշունչ և շնչավոր ունեցվածքի (հող, այդ հողի վրա աշխատող ստրուկների) նշանակություն, ճիշտ այնպես, ինչպես «աղխ» տերմինը ստորենացուց վերը բերված հատվածում։

Ժամանակի ընթացքում, երբ ստրկության ինստիտուտը վերանում է, «գերդաստան» տերմինը պահպանվում է միայն ունեցվածքի, կալվածքի նշանակությամբ՝ դրանից բացառելով ստրուկի, ծառայի ըմբռնումը։ Եթե նույնիսկ ճիշտ էլ չէ վերջին ենթադրությունը, համենայն դեպս Աստվածաշնչում ծառայի նշանակությամբ «գերդաստան» տերմինի գործածվելը կասկած չի հարուցում։

Իսկ ծառայի, ստրուկի ըմբռնումը կարող է իմաստային կապ ունենալ ստրկատիրական ընտանիքի հետ, նման հռոմեականին, ուր «ֆամիլիա»-ն (ընտանիք) ներքին կապ ունի «ֆամուլուս»-ի (ստրուկ) հետ և հունականին, ուր oikos (ընտանիք) բառը կազմվել է oikeus (ստրուկ) բառից։

Հռոմեական ընտանիք և ստրուկ հասկացողությունների առնչության մասին միտքն արտահայտել է Կ. Մարքսը իր Լուիս Գ. Մորգանի «Հին հասարակություն» գրքի կոնսպեկտում։ «...Իր նախասկզբնական նշանակությամբ familia բառը,— գրում է Մարքսը,— վերաբերվել է ոչ թե ամուսնական զույգին և իրենց երեխաներին, այլ ստրուկների և ծառաների ամբողջությանը, որոնք աշխատել են նրանց խնամելու համար և գտնվել են pater familias-ի իշխանության տակ»[2]։ Ի դեպ ավելացնենք, որ հռոմեական «ֆամիլիան» գործածվել է որպես ժառանգաբար անցնող patrimonium-ի (ունեցվածք) հոմանիշ։

Հնարավոր է, որ նման զուգահեռի հիման վրա էլ Հայկազյան լեզվի նոր բառագրքում գերդաստանին որպես հոմանիշ լատիներենից բերվում է familia ինչպես և հունարեն οἶκος, մինչդեռ «տուն» տերմինը համապատասխանում է լատիներեն domus-ին։

Հետաքրքիր է «գերդաստան» տերմինի բնորոշումը հենց նույն բառարանում. «բնակարան հանդերձ բնակչաւք, և ամենայն սպասուք», «տուն ըստ որում տան ծառայք, ընդոծինք»[3]։

---

[1] «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. Ա, էջ 12։
[2] Архив Маркса—Энгельса, հատ. IX, էջ 31։
[3] «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. Ա, էջ 12։

Ասվածի հիման վրա կարելի է ենթադրել, որ «գերդաստան» տերմինը կարող էր նշանակել իր կազմում տնային ստրուկներ ունեցող հասարակական նոր խմբավորում, իսկ «տուն» տերմինը մեծ ընտանիքի իմաստով գործածության մեջ է եղել տնային ստրկության հանդես գալուց շատ ավելի առաջ։

Մեծ ընտանիքի որակական փոփոխության հետ միասին, ստրկատիրական հասարակության մեջ զգացվել է նոր տերմինի անհրաժեշտությունը, որը հենց «գերդաստանն» էր։

Սակայն, «գերդաստանը» ստրկատիրական ընտանիքի նշանակությամբ տևական գոյություն չի ունեցել, ինչպես և երկարատև չի եղել ստրկատիրությունը Հայաստանում։

Ընտանիքի այդ ձևի անհետացման հետ միասին, անհետանում է նաև համապատասխան տերմինը, միաժամանակ և վերածնվում է մեծ ընտանիքի հին անվանումն՝ տունը։

Հայագրական գրականության մեջ մեծ ընտանիքի իմաստով «գերդաստան» տերմինի ուշ շրջանում գործածվելը ինչպես ասվեց արդեն, աղգագրագետների նորամուծությունն է, կատարված անցյալ դարի երկրորդ կեսին, որը կարելի է բացատրել մեծ ու փոքր ընտանիքները տարբերակելու անհրաժեշտությամբ։

Երբեմնի մեծ ընտանիք նշանակած «տուն» տերմինը այդ նպատակով անկարելի էր գործածել, քանի որ ժամանակի ընթացքում անհատական ընտանիքի աստիճանական առանձնացմամբ, ասյա և գերակշռմամբ, այն անցել էր վերջինիս։

Հանրագումարի բերելով ասվածը, հանդում ենք այն եզրակացության, որ հայ ընտանեկան համայնքը զարգացման որոշ աստիճանում իր կազմի մեջ ունեցել է նաև տնային ստրուկներ։

Ֆեոդալական հարաբերությունների զարգացմամբ տնային ստրկությունը հետզհետե անհետանում է, բայց և միաժամանակ դրա առանձին վերապրուկները պահպանվում են գյուղացիական համայնքում, մինչև անցյալ դարի վերջերը։

Այդ ինստիտուտի վերապրուկներից է նոքարությունը։ Հարուստ ընտանիքներում աշխատող նոքարները իրենց հասարակական դրությամբ սակավահող կամ հողազուրկ գյուղացիներ լինելով հանդերձ, համայնքի ազատ անդամներ են։ Այսպիսով նոքարները իրենց հասարակական այս առանձնահատուկ դրությամբ տարբերվում են ստրուկներից։

Մյուս կողմից՝ տնային աշխատողը թեև օգտվում է գերդաստանի մյուս անդամների շատ իրավունքներից, այնուամենայնիվ, նա բացառվում է գերդաստանի կազմից։ Չնայած, որ գերդաստանում նոքարների աշխատանքի օգտագործումը և հասարակական դիրքը ավելի բարենպաստ պայմաններում էին գտնվում քան տնային ստրուկներինը, այնուամենայնիվ, նոքարության ինստիտուտն ինքը դասակարգային խիստ շերտավորման է ենթարկված և, ինչպես նշեցինք, 19-րդ դարում նոքարները հանդիսանում էին հայկական գյուղի շահագործվող խավը։